# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

## <<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 27.09.2018թ. ԹԻՎ 864-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

05 հոկտեմբեր 2018 թ,
ժամը 12:00

*Մասնակցում էին.*

**Հանձնաժողովի նախագահ**
Ա.Ալավերդյան ՆԾ պետ
**Հայտեր բացող անդամներ**
Գ.Մանուչարյան Ծ և ԾԾԲ առաջ.ինժ.
Գ.Սարգսյան ՆԾ ԱՆԿ ինժեներ
**Հայտեր գնահատող անդամներ**
Դ.Սարգսյան Ծ և ԾԾԲ գլխ.մասնագետ
Ա.Կարախանյան ՆԾ ԱՆԿ ղեկ.
***Հանձնաժողովի քարտուղար***
Հ.Հակոբյան ՊԳՀԾ մասնագետ

## ՕՐԱԿԱՐԳ

1. *ՀԱՆ-ԳՀԱԾՁԲ-12/18* ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը՝

- <<Ռադար-Ավիա>> ՓԲԸ
- <<Ռեղինետ>> ՓԲԸ

Հանձնաժողովը արձանագրեց, որ նշված մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով նախատեսված պայմաններին:

Հանձնաժողովի նախագահ Ա.Ալավերդյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

| Չափ h/h | Անվանում | Նախահ. գին | <<Ռեդինետ>> ՓԲԸ | <<Ռադար-Ավիա>> ՓԲԸ |
|---|---|---|---|---|
| 1 | *<<Շիրակ>> օդանավակայանում նոր ILS/DME նավիգացիոն համակարգի շինարարական և ՍՊ-80 համակարգի ապամոնտաժման և աէրոդրոմային տարածքում տեղափոխման աշխատանքներ* | 37 500 030 | 31 944 000 | 42 500 000 |

<<Ռադար-Ավիա>> ՓԲԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող: Արձանագրվել, որ <<Ռադար-Ավիա>> ՓԲԸ առաջարկած գնային առաջարկը բարձր է նախահաշվային գնից:

**Հանձնաժողովը որոշեց**

1. <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-12/18>> ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին** տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Ռեդինետ>> ՓԲ ընկերությանը: Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

բ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

2. Էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:
3. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 17.10.2018թ. ժամը 12.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա.Ալավերդյան Հանձնաժողովի նախագահ

Գ.Մանուչարյան Հանձնաժողովի անդամ

Գ.Սարգսյան Հանձնաժողովի անդամ

Դ.Սարգսյան Հանձնաժողովի անդամ

Ա.Կարախանյան Հանձնաժողովի անդամ

Հ.Հակոբյան Հանձնաժողովի քարտուղար